

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՇԻԼԼԵՐ, ՖՐԻԴՐԻԽ, Թարգմանութեամբ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ. —
«ԱՒԱԶԱԿՆԵՐ». ողբերգութիւն: Թիֆլիս, տպարան Մարտիրոսեանցի,
1890 թ., փոքր քառաձալ, 194 երես, տառ № 12, գինն է 50 կ.

Այս արդէն երրորդ անգամն է, որ պ. Փիլիպպոս Վարդանեանցը մեզ առիթ է տալիս նորա թարգմանութիւններով դբադելու. Առաջին առիթը տւեց Ամալսի «Բնաւորութեան» թարգմանութիւնը. և մենք գտանք, որ, չը նալած հեղինակի մեծ համբաւին և գրքի կլասիկականութեանը, այնու ամենայնիւ գիրքը չի թողնում մի ամփոփ տպաւորութիւն և չի կարող ընթերցողի ոգուն որոշ ուղեւթիւն տալ:

Պ. Վարդանեանցը մի երկրորդ առիթ տւեց Ամիչիսի «Սիրտ» գրքի թարգմանութիւնով: Բայց այդ այն սակաւ գրքերիցն է, որոնց մասին «Մուրճ»-ը ժամանակ չ'ունեցաւ գրախօսութիւն տալու իւր ժամանակին. Օգտուամ ենք գէպքից գէթ այստեղ չալտնելու, որ այդ գիրքը վերին աստիճանի բարոյակրթիչ գիրք է և որ նա, չը նալած ընդհանրապէս տարածւած կարծիքին, ամբողջապէս չի նշանակւած երեսանների ընթերցանութեան համար, այլ նա աւելի մի

գիրք է ծնողների և դաստիարակչների համար: Այսպէս է գոնէ իմ կարծիքը:

Պ. Վարդանեանցի թարգմանութիւններով «Մուրճ»-ը զբաղւեց, վերջապէս, անցեալ 2-րդ համարում, նորա «Արեւեան վիպաշխարհ» փոքրիկ գրքուկի առիթով: Եթէ ընթերցողը չիշում է, մենք գտանք, որ այդ թարգմանութեան գերմանական բնագիրը բաւականին չաջող փոխադրութիւն է Ֆիրդուսի'ի Շահ-Նամէ ոտանաւոր գրած մեծ պօէմի մի էպիղոգի և որ հաւերէն թարգմանութեան լեզուն թէև բարձր, բայց չաջող ոճ ունի. Բայց և այդ առիթով մենք նկատեցինք պ. Վարդանեանցի հակումը խօսքեր և դարձաւորներ բանեցնել, որոնք սիրուն կը լինէին, եթէ միայն գործածական լինէին, բայց որոնք ոչնչով աւելի լաւ չեն, քան մեր ալժմեան խօսակցական և գրական լեզուի մէջ գործածւող խօսքերը:

Պ. Վարդանեանցի այդ հակումը, սակայն, նշանաւոր պակասութիւն

չի երևում արձակ և մանաւանդ ազատ փոխադրութիւնների մէջ, Բալցնա շատ և շատ վտանգաւոր է, երբ խօսքը ոչ թէ ազատ փոխադրութիւնների մասին է, այլ մի կլասիկական գրւածքի թարգմանութեան մասին: Պէտք է ասած, որ պ. Վարդանեանցը, բանաստեղծական գրականութիւնից, թարգմանել է միմիայն փոխադրութիւններ: Նա թարգմանել է Նիլականը և Ոգիսէականը ոչ թէ Հոմերոսի, այլ գերմանացի Շմիդտի. նա թարգմանել է Ռուստէմ և Զոհրաբը ոչ թէ Ֆիրդաուսի՝, այլ մի ինչ որ անչալտ գերմանական հեղինակի: Մեր ալթմեան գրական պահանջի տեսակէտից, ըստ իս, պ. Վարդանեանցը շատ լաւ է արել ալդպէս վարւելով. բալցնալ բոպէին իմ ասածը սա է, որ նա մինչ ալթմ փորձ չէր արել իւր թարգմանչական տաղանդի չափը ցոյց տալ վսեմ գրւածքների ճշգրիտ թարգմանութիւնով: Մինչ ալթմ պ. Վարդանեանցը չէր երևացել հասարակութեան առջև իբր թարգման բարձր գեղարւեստական գրւածքների, այնպէս, ինչպէս սոցա ստեղծել են մեծ բանաստեղծները: Եւ ալդ փորձնա առաջին անգամ անում է ալթմ, լոյս ընծալելով Շիլլերի «Աւաղակներ» ողբերգութեան թարգմանութիւնը:

Մեր առաջին խօսքը ալդ մասին՝ շնորհաւորելն է թարգմանչին նորա ալդ առաջին քալի համար: Ինչ վերաբերում է նախապատրաստութեան՝ պ. Վարդանեանցը լիակատար իրաւունքով կարող է մերձենալ ուղղակի կլասիկներին. նա ալնքան զգուշ է եղել և թարգմանչական

պատիւ հասկացող, որ կլասիկներին նա դիմել է երկար տարիներ վարժեցնելով իւր գրիչը աւելի քիչ պատասխանատու գործքերի վերալ: Ալդպէս է պահանջում մեթօդիկը: Եւ ահա ալդ է, որ գուլելին է: Դորանով բաւական է ասած, որ Շիլլերի «Աւաղակներ» թարգմանութեան ընդունելի լինելու համար թարգմանչի անունը բաւականին գրաւական է: Բալցնա ընդունելի է միմիայն առհասարակ, որովհետև ալդ թարգմանութիւնը, որպէս շուտով պէտք է տեսնենք, խոշոր թերութիւններ ունի: Շիլլերի լեզուն ճոխ է, բալց գօրեղ և վերին աստիճանի զրամալական. «Աւաղակներ» լիքն է նաև ժողովրդական խօսքերով ու դարձածներով: Շիլլերը ալդ գրւածքում դուրս է բերում անասուն-մարդուն և դնում նորա դիմաց մարդկալին բարձր, արդարատենչ, ամեն արգելք խորտակող, ազատութեան ձգտող ոգին: Սկզբից մինչև վերջ ալդ գրւածքը լիքն է ոգու բազմատեսակ լուզմունքներով, որ Շիլլերը արտալպտում է միմիայն ծնւած դրամատուրգներին չատուկ ոլթով և վարպետութեամբ, չը նալած որ գրւածքը բանաստեղծի առաջին դրամալական գրւածքն է, սկսւած հեղինակի 18 տարեկան հասակում և վերջացրած հազիւ իւր չափահասութեանը հասած ժամանակ: Ճիշդ է, ալթմ մեզ ծանօթ «Աւաղակներ» դեռ ալդ ժամանակալ գրւածք չէ. սա փոփոխութիւնների ենթարկեց և մշակեց թէ բեմական կողմից և թէ լեզուի կողմից և աւելի էլ կատարելագործեց ու առ միշտ գրականու-

թեան անմահ սեպհականութիւն դարձաւ: «Աւաղակներով» վերջանում է գերմանական գրականութեան, ալսպէս կոչւած, «հանճարի շրջանը» (Genieperiode) 18-րդ դարում, ամիոփելով իւր մէջ, թէ բովանդակութիւնով և թէ ձևով, հսկայական գծերով արտաբերւած ժամանակի և ուղումը և համաշխարհային պատմութեան մօտազգի էպօքի ալն զարհուրելի շարժումները, որոնք Արեմտեան Սերոպալում, մասնաւորապէս Ֆրանսիայում, կատարւեցին 18-րդ դարու վերջերքում: «Աւաղակներին» աւարկան է ընդհարումը, կօնֆլիկտը օրէնքի և ազատութեան մէջ. իսկ Շիլլերի կեանքի համար նա մասնաւորապէս նշանակութիւն ունի նրանով, որ նա, զինւորական ակադեմիայում բանտարկւած ժամանակ, նոյնպէս ձգտում էր դէպի ազատութիւն, որպէս և իւր ժամանակի ոգին, որը ձգտում էր ազատել արդէն հնացած միջնադարեան օրէնքների կապանքներից: Աւաղակ դառած Կարլին բանաստեղծը չատկացրել է իւր սեպհական իդէալական գծերը. Կարլը գող-աւաղակ չէ, ալլ զուտ քաղաքական աւաղակ է, որը ուղում է վրէժխնդիր լինել իւր ժամանակաւ անարդարների և կեղծաւորների դէմ: Եւ նոյն իսկ ինքը՝ Կարլը անձնատուր է լինում աւաղակութեան չուսահատութիւնից՝ կորցնելով իւր հօր սէրը, ալն հօր, որ խաբւում է Կարլի եղբայր Նեքաւոր Ֆրանցից, Բալց վերջը, երբ իւր եղբօր Նեքաւորութեան մասին տեղեկանում է, նա ալլ ևս չի շարունակում իւր աւաղակութիւնը, և զղջալու հա-

մար նա արհամարհում է անձնապայանութիւնը և գերադասում է իրան չանձնել արդարադատութեան ձեռքը, մտածելով, որ իւր նման երկուսը բարոյական աշխարհքը հիմն ի վեր կը տապալեն, եթէ մինչ վերջ շարունակեն իրանց աւաղակալին ազատութիւնը: Ալսպիսով օրէնք չը ճանաչող ազատութիւնը ինքն ևս խորտակւում է:

Ահա ալլպիսի մեծ խնդիրներ է առաջադրել Շիլլերը «Աւաղակներին» մէջ և աշխատել իւր զարմանալի բազմակողմանի բնաւորութիւններ կրող հերոսների բերանը դնել մի լեզու, որը ստորինից և դարչից ու անասնալինից վերանում է դէպի բարձրագոյնը՝ ալլ երկու ծալրերի մէջ եղած բոլոր աստիճանաւորութիւններով: Եւ ի հարկէ, ալստեղ, քանի որ Շիլլերի հանճարի հետ գործ ունինք, վերին աստիճանի հետաքրքրական է նորա խօսքերը կատարեալ հաւատարմութեամբ վերարտադրել և ոչ մի տեղ չը հանդիսանալ նորա խօսքերի աղատ թարգմանը, բացի երբ հարկաւոր է մի դարձած հալացնել: Դրանով մենք ալստեղ կրկնում ենք մեր արդէն մի անգամ ասածը, եթէ վիշում է ընթերցողը՝ Շեքսպիրի «Համլետին» Սենքերիմ Արծրունու թարգմանութեան առիթով՝ «Մուրճ»-ի 1889 թ.:

Արդ, պ. Փիլ. Վարդանեանցը իւր թարգմանութեան մէջ չեղում է Շիլլերի լեզուից. նա բաւականաչափ չի գնահատում բնաղրին հաւատարիմ մնալու արժանաւորութիւնը. բացի ալն, որ թարգմանիչը ալստեղ չիշտում է իւր սովորութիւնը՝ պարզ

ու հասարակ խօսքերի տեղ խրթին
և գրաբար խօսքեր գործածել, նա
չեղում էլ է բնագրից՝ ազատ թարգ-

մանութիւնը դնելով բնագրի խօս-
քերի տեղ:

Բայց այստեղ փաստերը թող
իրանք խօսեն:

Շիրլիերը ասում է.

Գործ. I. Գեղ. I.

Ծ. Մ օ օ ռ. Օ՛հ, իմ չղսերը. իմ ոսկի
երազները:

Ֆրանց... Տեսնո՞ւմ էք ալժամ,
հայր.—կրակոտ ոգին զարգացաւ,
ծաւալ ստացաւ, սքանչելի պտուղ-
ներ բերաւ:

...Տեսէ՞ք այս պարզասրտու-
թիւնը, ինչպէս նա գեղեցիկ կերպով
լրբութեան է փոխւել:

Պ. Վարդանեանցը թարգմա-
նում է.

Նշո՞ւկ չղսերիս, ոսկեհիւս ևրազ-
ներիս:

Արդ զմալնցէք, հայրիկ:—Բոր-
բորուն ոգին զարգացաւ, զօրացաւ,
սքանչելի պտուղներ բերաւ:

Տեսէ՞ք, թէ ինչպէս ալդ պարզ
սիրտն առօք փառօք լրբութեան է
տեղի տալիս:

Մի քիչ չետո՛ւ՝ der unternehmende Kopf, որ ուղղակի ձեռնարկող
գլուխ է նշանակում, թարգմանում է՝ դիմագրաւ գլուխ. Շիրլիերը
ասում է՝ և երբ ալդ հիանալի սաղմերը կը մեծանան մինչ հասունութիւն,
իսկ պ. Վարդանեանցը թարգմանում է՝ երբ ալդ սիրուն ծիւերը ժամանակով
իսպառ բացւին:

Ծ. Մ օ օ ռ. Ներիր ինձ, որդիս, մի
բարկանար մի հօր վերալ, որը իւր
դիտաւորութիւնների մէջ իրան խաբ-
ւած է տեսնում:

Ներիր ինձ, որդեակս, մի բար-
կանար չուսախաբւած հօրդ վերալ:

Մեղ կ'ասեն, թէ մեր թարգմանչի ասածը աւելի կարճ է և սիրուն:
Իսկ մենք կը պատասխանենք, որ Շիրլիերի ասածը աւելի ուշ ունի:

...Աստուած, որը կարլոսի ձեռ-
քով ինձ արտասուք է ուղարկում,
քեզնով, Ֆրանց, պէտք է ալդ արտա-
սուքը սրբէ իմ աչքերից:

Աստուած, որ կարլոսի ձեռքով
ինձ արտասուք առաքեց, քո ձեռ-
քով կը սրբէ սրանց, ո՛վ իմ Ֆրանց:

Ֆրանց! Այո, հայրիկ, ձեր աչքե-
րից նա ալդ արտասուքը կը սրբէ...

Ձեր կեանքը աչն պատգամախօսն
է, որին ես ամենից առաջ խորհուր-
դի եմ կանչում, երբ մի անելիք
ունիմ...

Այո, հայրիկ, ե՛ս պիտի սրբեմ ալդ
արտասուքը ձեր աչքերից:

Ձեր կեանքն է ինձ համար աչն
սուրբ պատգամը, որին միշտ չար-
մարեցնում եմ իմ գործերս...

Շ ի լ լ և ր ւ ր ւ ասում է.

Ոչ մի պարտաւորութիւն ակնքան սուրբ չէ ինձ համար, որը ևս պատրաստ չը լինեմ կոտորելու, երբ խօսքը ձեր թանկագին կեանքի մասին է:

Ֆ ր ան ց ի Դէ հիմա սասցէք ինձ, եթէ դուք ալ որդուն ձերը չ'անուանէիք, դուք բաղդաւոր մարդ կը լինէիք:

Մ. Մ օ օ ր ի Լ ռ ի ր, Լ ռ ի ր. Երբ տատամարը նորան մօտս ընկաւ, ևս նորան բարձրացրի զէպի, երկինք ե գոչեցի՝ բաղդաւոր մարդ չեմ ևս արդեօք:

Ֆ ր ան ց ի Այդ ասացիք դուք, Դէ, դուք գտաք արդեօք ալդ երջանկութիւնը: Դուք նախանձում էք ձեր ամենալեւտին դիւղացուն, որ նա սորա հալքը չէ:—Դուք վիշտ կ'ունենաք, քանի որ դուք ալդ որդին կ'ունենաք: Այդ վիշտը Կարլոսի հետ կ'աճի: Այդ վիշտը ձեր կեանքը կը թաղէ:

Ֆ ր ան ց ի Հէնց որ դուք ալ ևս նորան չը սիրեցիք, ալդ հրէշը ալ ևս ձեր որդին չէ, թէկուզ նա ձեր մօից կտրւած լինի. (Liebt ihr ihn nicht mehr, so ist diese Abart auch euer Sohn nicht mehr, und wär' er aus eurem Fleische geschnitten).

Մ. Մ օ օ ր ի Անքնաբոյզ զաւակ. հէ, բայց և այնպէս զաւակս է, զաւակս (Unzärtliches Kind! ach և այլն):

Ֆ ր ան ց ի Մի ամենասիրելի, հիանալի զաւակ, որի մշտական մտածմունքն է՝ ոչ մի հալք չ'ունենալ. (Ein allerliebste, köstliches Kind, dessen ewiges Studium ist, keinen Vater zu haben).

Պ. Վ արդան ետեցը թարգմանում է.

Ոչ մի պարտաւորութիւն ակնքան թանկ չէ ինձ համար, որ չ'ուրանամ, եթէ միայն ձեր թանկագին կեանքի օգուան ալդ պահանջէ:

Դէ ուրեմն ասացէք... արդեօք երջանիկ չէիք լինիլ, եթէ հարկ չ'ունենալիք ձեր զաւակն անուանելու ալդ որդուն:

Լ ռ ի ր ի Լ ռ ի ր ի Երբ զայնակը նրան մօտս ընկաւ, ևս զէպի երկինք վերցրի նրան և գոչեցի—«ուղ երջանկութիւն...»

Այդպէս է, բայց երջանիկ դարձաք արդեօք, Դուք ձեր ամենալեւտին ճորտին անդամ նախանձում էք, որ դա նրա նման որդու հալքը չէ... դուք երբէք վշտից չէք ազատուիլ, քանի որ ձերը մնալ ալդ որդին: Եւ Կարլոսի աճելովն ալդ վիշտն էլ պիտի զօրանալ ե խորտակէ ձեր կեանքը:

Եթէ ալ ևս չէք սիրում նորան, ասել է թէ ալդ պոռնըկորդին ալ ևս ձեր զաւակը չէ, թէն ձեր մօից կաղմած լինէր:

Ա ն զ դ ո չ չ զաւակ. Ո՛հ, բայց և այնպէս զաւակս է, զաւակս:

Ո՛հ սիրասուն, հէ քնքուշ զաւակ, որի մշտնջենաւոր փափագն է՝ ոչ մի հալք չ'ունենալ:

Շիլլերը ասում է.

Ծ. Մ օ օ ր. Արդար է, շատ արդար!
Իմն է, իմը բոլոր մեղը (Gerecht!
sehr gerecht!—Mein ist alle Schuld).

Ծ. Մ օ օ ր... Բայց տես, իմ որդուս
լուսահատութեան չը հասցնես:

Ծ. Մ օ օ ր. Նս ասում եմ քեզ՝ իմ
որդուն լուսահատութեան չը հասցնես!

Ակներև է, որ, ինչպես և բնագրումն է, Ծ. Մ օ օ ր'ը երկու անգամ
միևնույն խօսքերն է կրկնում, մինչդեռ պ. Վարդանանցը մի և ն ուն
խօսքերը մի տեղ մի տեսակ է թարգմանում, միև տեղ՝ ուրիշ տեսակ,
որով և ոճի ուժը կորցնում է:

Ֆրանց. ...Ձեր որդուն դուք չը
պիտի նզովէք: Դուք թնչն էք ձեր որդի
անուանում—որին դուք կեանք էք
տուել, թէև նա ամեն տեսակ ջանք է
գործ դնում ձերը կրճապտելու:

(Was heisst ihr euren Sohn?
dem ihr das Leben gegeben habt,
wenn er sich auch alle ersinnliche
Mühe gibt, das ihrige zu verkür-
zen?).

Զարգաց գեղ. երբեք արդար.

Շիլլերը ասում է.

Ծ. Մ օ օ ր. Խաբւած, խաբւած! Այժմ
իմ հոգու վերալ փառակի նման մի
բան է անցնում: Խաբբապական հու-
նարներ (Spitzbübische Künste!).
Երկինք և դժոխք! Ո՛չ դու, հանր
խաբբապական հունարներ! Մարդա-
սպան, աւազակ՝ խաբբապական հու-
նարների պատճառով! Նորանով ուսաց-
րած! Կեղծում է, բռնում իմ նամակ-
ները—նորա սիրտը լիքը սիրով—օհ,
ես մի հրէշ՝ մի փմարի ձեռքով—
իսկ նորա հալրական սիրտը լիքը

Պ. Վարդանանցը թարգմա-
նում է.

Արդար ես, արդար: Բոլոր լան-
ցանքը իմն է, իմն:

Բայց տես, լուսահատութիւն չը
պատճառես իմ որդուն:

...Դարձեալ կ'ասեմ— չը լինի թէ
որդուս լուսահատութեան հասցնես:

...Բնաւ հարկ չը կալ նզովելու
ձեր որդուն: Որքն էք որդի անուա-
նում... Նրան՝ ում կեանք էք պար-
գեւել, թէև նա ամեն միջոց որոնէր
ձ երի թեւերը կտրելու:

Պ. Վարդանանցը թարգմանում է.

Խաբւած եմ, խաբւած, Այժմ
հոգուս մէջ փռվակի պէս լուս իջաւ:
Դիւալին նենգութիւն. Երկինք և
դժոխք: Դու չես, հալրիկ... Դիւալին
նենգութիւն... Վատթար խաբէու-
թիւն և ես սպանիչ, աւազակ: Սկաց-
նում է ինձ նրա առջև, նամակներս
բռնում է, կեղծում է... Մինչդեռ
նրա սիրտը լի էր սիրով... Ոհ, իմ
հրէշալին փմարութեանս... Նրա հալ-
րական սիրտը սիրապատար... Ոհ,
ինչ ցածութիւն: Հերիք էր, որ նորա

(ՇԻԼԼԵՐ)

(Պ. Վ. արդ ա ն ե ա ն ց)

սիրով—օհ! խարդախութիւն, խարդախութիւն (oh! Schelmerei, Schelmerei!): Հերիք կը լինէր մի անգամ ծունր չօքէի—մի կաթիլ արտասուք թափէի—օհ, որքան ապուշ, ապուշ, ապուշ լիմաբն եմ ես! (Oh! ich blöder, blöder, blöder Thor!): Ասկարող էի երջանիկ լինել—օհ, խաբեբայութիւն, խաբեբայութիւն (oh! Büberei, Büberei): Իմ կեանքի բաղդը խաբեբայութեամբ լափշտակւած! (Das Glück meines Lebens bübisch, bübisch hinwegbetrogen). Մարդասպան, աւազակ՝ խաբեբայական հունարների պատճառով!—Նա չի էլ բարկանում եղել, Նորա սըրտում նզովքի դադափարն անգամ չի եղել—օհ, չարագործ, անըմբռնելի, գետնաքարչ, զգեւի չարագործ: (Oh! Bösewicht! unbegreiflicher, schleicher, abscheulicher Bösewicht):

Այս օրինակներով միեւն կարծում ենք, թէ բաւականչափ ասպացուցեցինք, որ պ. Փիլիպպոս Վարդանանցը շատ թէ քիչ ազատ կերպով է վարւում «Աւազակների» բնագրի հետ: Մի բան, որ մինք պակասութիւն ենք համարում, քանի որ գրեթէ մեր բոլոր առաջ բերած օրինակներում՝ ուղղակի թարգմանութիւնը նույնքան հալերէն է, որքան և պ. Վարդանանցի լեզուն, այն զանազանութեամբ միայն, որ առաջինի միջոցով կարելի է Շիլլերի հետ աւելի լաւ ծանօթանալ, քան պ. Վարդանանցի թարգմանութիւնով:

Իսկ ինչ վերաբերում է մեր այն նկատողութեան, թէ պ. Վարդա-

առջև ծունր չօքէի, մի կաթիլ արտասուք հերիք էր... Եղուկ ինձ, կոյր, կոյր, կոյր չիմարիս: Ասկարող էի երջանիկ լինել... Ա՛խ, ինչ վատթար պատրանք: Կեանքիս բաղդը չարաչար, չարաչար գողցած: Մարդասպան, աւազակ... և միայն դժոխալիւն խաբեբայութեան պատճառով: Իսկ նա մինչև անգամ չէր բարկացել, անէծքի նշով անգամ չէր ունեցել մտքի մէջ... Ո՛վ ոճրագործ, չարամիտ, գետնաքարչ և անղգամ ոճրագործ:

Նեանցը բոլորովին ի զուր կերպով դրաբար խօսքեր և դարձածներ է գործածում, թող դրան ասպարոց ծառայէ հէնց ալս մի կտորը, 2-րդ արարւածից, տեսիլ 3-րդ:

Մօօր: Մինչև արդտեղ շատ ճարտար բարբառեցար: Սակայն մատչինք բո՛ւն խնդբին: Ի՞նչ է կամենում գերարգոյ մագիստրատն ազդ առնել ինձ ձեր բերնով:

Մի երրորդ տեսակ նկատողութիւն կարելի էր անել այն բառերի նկատմամբ, որոնք հալերէնում չ'ունին այն չատուկ նշանակութիւնը, ինչ նոքա ունին գերմաներէնում: Յալտնի է, որ մեր գործածական լեզուն զեռ հեռու է այն ճոխու-

թիւնից, որ ունին զրականապէս աւելի բառաջացած ազգերը: Զէնց օրինակ՝ Schwärmer խօսքը, որին նորնանշան կարելի է մեր լեզուով գտնել շատ խօսքեր, առանց որ սոցանից մէկը կամ միւսը կարողանալ գերմաներէն խօսքի կատարեալ համապատասխանը համարել: Վերջին բառարաններից մէկը (Վոլլաւեան) թարգմանում է այդ խօսքը ալսպէս՝ լեզվեղուկ, սիրահար, զբօսասէր, զեղիս, բանդագուշող, ցնորոզ, դանդաշող. մոլի, հարեալ (ի...), մոլեռանդ:

Պ. Վարդանեանցը թարգմանում է (3-րդ արարած, տեսիլ առաջին) Ֆրանցի խօսքերը՝ դարձրած Ամալիային՝ Schon wieder hier, eigensinnige Schwärmerin? ալսպէս. «Դարձեալ ալստեղ ես, կամակոր մոլեւածան»: Բայց սա մի նորոհնար խօսք է, որը դժուար թէ մէկը կարողանար գերմաներէն խօսքի մտքով հասկանալ: Նման շատ օրինակներ կարող ենք բերել ներկա գրքից:

Մի նկատողութիւն ևս: Հերքուլէսի ըռնած գործիքը պ. Վարդանեանցը մկունդ է անուանում: Բայց մկունդի նշանակութիւնը հայերէնում բաւականին սրուշ չէ. միայն թէ պէտք է ենթադրել, որ մկունդ հին հայերէնում նշանակում է եղել կարճ նիզակ, մի գործիք, որ Հերքուլէսը չէր բանեցնում: Ոչ թէ մկունդ, այլ լախտն է եղել առասպելական Հերքուլէսի գործածական գործիքը. իսկ լախտը մի և նույն է թէ մահակ:

Այս բոլոր նկատողութիւններից լիտ, պարտք ենք համարում լուսութեան չը տալ աչն հանդամանքը, որ Շիլլերի «Աւազակները» ամենադժուար

թարգմանելու գրեածքներինցն է և պահանջում է թէ զերմաներէնի և թէ հայերէն լեզուի կատարեալ դիտութիւն: Եւ պ. Վարդանեանցը գործ է գրել ալս դէպքում իւր բոլոր հմտութիւնը. ալդ երեւում է գրեթէ ամեն մի տողից:

Ամիոփենք, ուրեմն, մեր բոլոր նկատողութիւնները «Աւազակները» թարգմանութեան մասին:—Թարգմանութիւնը, ընգհանրապէս, զիւրմբունելի է և արած է թէ գերմաներէնի և թէ հայերէնի հմտութիւնով: Բայց այդ թարգմանութիւնը բաւականաչափ հաւասար թարգմանութիւն չէ և ալս պատճառով չի հասնում բնագրի լեզուի ճոխութեան և ոյժի աստիճանին: Թարգմանութեան զիւրմբունելիութիւնը դնած է հարադատութեան հաշիւ: Իբր գրական վաստակ, նա գնահատելի նպաստ է ընթացիկ զրականութեան, բայց նա մի փոքր չէ հակական գրականութեան համար առհասարակ:

Իբր ընթացիկ գիրք՝ խորհուրդ ենք տալիս ամենքին ձեռք բերել նորան և կարդալ, անողատճառ կարդալ: Սակաւ գրքեր կարող են ալսպէս դրաւիչ կերպով խօսել մարդու ազնազոյն զգացումներից, ողևորել դէպի վիհը ու արդարը, արթնացնել զզլանք դէպի գարշը, ցածն ու անպիտանը, որքան Շիլլերի «Աւազակները»: Չը նալած որ աչն հանգամանքները, որոնք ստեղծել են ալդ դրաման իւր քարաքտէրներով, ալսմ միայն պատմական նշանակութիւն ունին, բայց և տխրիս դերմանական երիտասարդութեան սէրը

և հիացմունքը պատկանել են Շիլ-
լերի «Աւաղակներին», այն երիտա-
սարդութեան, որը չափազանցու-
թիւնների մէջ տեսնում է իւր ուժը,
մեծախօս ֆրագներին մէջ՝ ոգևորու-

թեան լեզուն, իսկ ամբողջի վերաջ
իշխող շունչը՝ իւր սեպհական էու-
թեան մի մասը:

Ա. Ա.

ՓԱՓԱՋԵԱՆՑ, Վ. — ԷԼԱԼՕ, Թիւրքա-հայերի կեանքից. Թիֆլիս. տպա-
րան «Արօր» Տ. Նաղարեանցի: 1890 թ., փոքր քառաձալ, 28 երես.
գինն է 5 կոպէկ:

Ժողովրդական ընթերցանութեան
համար մի շարք հրատարակելիք է-
ժանագին գրքերից աչս մաքուր հրա-
տարակած գրքուկը առաջինն է:
«Լալօն» պարզ և հետաքրքրական լե-
զուով պատմած մի փոքրիկ պատ-
կեր է Թիւրքա-հայերի կեանքից: Գոր-
ծողութիւնը կատարուում է վան քա-
ղաքում: Թէն բոլոր գործող անձինք՝
հարկահան Սրգօն, Կարապետ աղան
և Աւտօն (Լալօ) հաչեր են, սակայն
ալդ տեսակ բնաւորութիւնների գո-
լութիւնը սերտ կապւած է Տաճկաս-
տանում իշխող կարգ ու կանոնների
հետ: Ամեն երկրում կան վատ հար-
կահաններ, անգութ վաշխատուներ
և անպաշտպան, հլու հարստահար-
ւածներ. բայց Սրգօններ, Կարապետ
աղաներ և Լալօներ կարող են գոյու-

թիւն ունենալ միմիայն Տաճկաստա-
նում:

Ժողովրդի ընթերցանութեան հա-
մար «Լալօն» ցանկալի գիրք է, միայն
պէտք էր, մեր կարծիքով, աւելի շեշ-
տել նորա վերայ, որ Թիւրքա-հաչե-
րի կեանքի ալդ երևութները կը լի-
նին, մինչև որ գոյութիւն ունենան
նոցա ստեղծող պալմանները: Քարող-
ներով ոչ Սրգօններ և Կարապետ ա-
ղաներ կ'ուղչեն, ոչ էլ Աւտօներ
կը պակասեն. մինչև որ Տաճկաստա-
նում կը տեսն. ներկայ կարգ ու կա-
նոնները՝ վերջ էլ չի լինի Սրգօնների
և Կարապետների պէս հարստահա-
րիչների: Նեխած ճահիճներում վար-
դեր չեն բուսնում:

Լ. Ս.

ՔԱԼԻՆԹԱՐ, ԱՆՈՒՇԱԻԱՆ. — ՖԻԼՕԿՍԵՐԱ ԵՒ ՆՈՐԱ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՋԵ
ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ: Արտատպած «Մշակ» լրագրից: Թիֆլիս, տպա-
րան Կովկասի կառավարչապետի կանցելիարի: Փոքր քառաձալ, 15
երես, տառ № 10, գինն է 2 կոպէկ: ¹⁾

Աչս փոքրիկ բրօշիւրը, տպւած
1.200 օրինակով, գրւած է չափա-
պէս հաչերէն լեզուով, ֆիւլիսերա-

չին կօմիտետի առաջարկութեամբ,
որը աշխատում է տեղական աղգա-
բնակութեան մէջ ճիշդ դադարիար-

¹⁾ Գինը չի յայտարարւած, բայց յայտնւած է «Մուրճ»-ի խմբագրութեան: